Թեման՝ Ինքնուրույն աշխատանքների դերը ուսումնական գործընթացում: Ինքնուրույն աշխատանքների ստուգում

Հետազոտող ուսուցիչ՝

ՄԵՆԹՈՐ՝

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ.....6

ԳԼՈՒԽ 1

ՍԵՓԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՃԱՆԱՉՈՒՄԸ ԵՎ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

ԳԼՈՒԽ 2

ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ԻՆՔՆՈՒՐՈՒՑՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 2.1

ԻՆՔՆՈՒՐՈՒՑՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ.....16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....18

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գլոբալացվող և սրընթաց զարգացումների աշխարհում, երբ ավանդույթներն իրենց դաստիարակիչ և ուղղորդող գործառույթները կորցնում են, մարդու ինքնուրույնությունը, որպես անձնային որակ առանձնահատուկ կարևորություն է ձեռք բերում: Ինքնուրույնությունը սեփական կյանքը կազմակերպելու, սեփական հոգևոր ու մտավոր հնարավորությունները գիտակցելու, գնահատելու և ըստ այդմ իր զարգացման ուղին ընտրելու մարդու ընդունակությունն է: Ինքնուրույնության բարձր մակարդակը մատնանշում է մարդու սեփական ուժերի հանդեպ վստահությունը, ինքնագիտակցության և հետևաբար, նաև հավակնությունների բավարար մակարդակի առկայությունը: Սակայն, նման որակը դատարկ տեղում չի ձևավորվում. հանրակրթական համակարգից պահանջվում է մշակել ինքնուրույնության կայացմանը սատարող ռազմավարություն և իրացնել այն ինչպես կրթության բովանդակությամբ ու գնահատման համակարգով, այնպես էլ ուսուցման տեխնոլոգիաներով:

Ինքնուրույնության ձևավորման նախապայմանը ազատությունն է: Որպեսզի սովորողը ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալի, նրան անհրաժեշտ է այդ հնարավորությունը տալ: Կրթության յուրաքանչյուր հաջորդ աստիճանում աշակերտի ազատության սահմանները պիտի ավելի ընդարձակվեն: Ինքնուրույնությունը կարող է ձևավորվել միմիայն համապատասխան գործունեության պրոցեսում: Եթե երեխային սովորեցնում ենք պարտադրաբար, եթե նրան ուսումնական գործունեության ազատություն, սխալվելու և սեփական սխալների հիման վրա ճշմարիտ ճանապարհ դուրս գալու իրավունք չենք տալիս, երբեք նրանից ինքնուրույն մարդ չի ձևավորվի: Սովորողի հնարավորինս ազատ ուսումնական գործունեություն ծավալելու իրավունքի ոտնահարումը շատ հոգեբանական վնասների պատճառ է դառնում: Երեխաների ինքնագիտակցությունը զարգանում ու զորանում է մարդկանց հետ շփումների արդյունքում: Եթե նա ֆիչ թե շատ խելացի է՝ կարող է լավ կատարել հանձնարարություններ, իսկ ահա ստեղծագործաբար աշխատել, խնդիր դնել, ծրագիր ու պլան կազմել և ինքնուրույն իրականացնել դրանք՝ ի վիճակի չէ. նա չունի ինքն իր հանդեպ այդ վստահությունը: Պարտադրանքը սպանում է մարդու մեջ աշխարհի հանդեպ ամեն մի հետաքրքրություն: Չկա հետաքրքրություն՝ չկա կայուն ուսումնական մոտիվացիա, որը հիմնարար գիտելիքներ ձեռք բերելու գլխավոր երաշխիքն է: Ինքնուրույնության գաղափարի համատեքստում ուսուցչի համար կարևոր խնդիր է դառնում ուսուցման գործընթացն աստիճանաբար ինքնուսուցման գործընթացի վերածելը:

Ինքնուսուցման պարագայում սովորողն ինքն է կազմակերպում, կարգավորում և հսկում իր իմացական գործունեությունը: Ինքնուսուցումը իմացական գործունեության բարձրագույն մակարդակն է, երբ անձը պատրաստ է ինչ-որ չափով դուրս գալ ուսումնական պահանջների սահմաններից, անցնել

ազատ իմացական գործունեության, ինքն իր առաջ դնելով խնդիրներ՝ պայմանավորված իր հնարավորությունների գիտակցմամբ ու հաշվառմամբ: Աշակերտին ինքնուսուցման ճանապարհ դուրս բերելու խնդիրը ենթադրում է նրա մեջ սաղմնավորել և զորացնել ինքնակրթության պահանջմունքն ու ինքնակատարելագործման կիրքը, ինչպես նաև զարգացնել վերջիններիս բավարարման համար անհրաժեշտ ընդունակությունները:

Ինքնուրույն ուսումնական աշխատանքներ լավագույնս կարելի է իրականացնել ուսուցման գործընթացը մասնակիորեն հետազոտական գործընթացի վերածելով: Ասել է, թե՝ սովորողների ուսումնական գործունեությունը կազմակերպել որպես ուսումնահետազոտական գործունեություն: Ուսումնական աշխատանքները, որ կատարում է սովորողը դպրոցում, թե տանը, պետք է ունենան իրենց մեջ հետազոտական գործունեության տարրեր և այդօրինակ գործունեության չափաբաժինը կրթության յուրաքանչյուր հաջորդ աստիճանում համապատասխան չափով ավելանա:

Ուսումնահետազոտական գործունեությունը ենթադրում է սովորողի ստեղծագործական ընդունակությունների արթնացում ու ակտիվացում: Ուսումնառությունը հետևողականորեն վերածելով ակտիվ ստեղծագործական աշխատանքի հանրակրթական դպրոցը դրանով իսկ պայմաններ կստեղծի այսպես կոչված ստեղծագործ (կրեատիվ) անձի ձևավորման համար, ինչը բոլոր ժամանակներում (և մեր ժամանակներում՝ առավել ևս) համարվել ու համարվում է անձի ամենակարևոր որակը: Ստեղծագործական ակտիվության չափանիշներ կարող են համարվել ինտելեկտուալ նախաձեռնության դրսևորումը, օպտիմալ մոտիվացիայի առկայությունը, ստեղծագործական ընդունակությունների և կարողությունների զարգացման մակարդակը, ինքնուրույնության դրսևորումը և ուսումնաիմացական գործունեության ինքնակազմակերպման ընդունակությունը:

Այսպիսով, ամեն ինչի հիմքում ազատության գաղափարն է. վստահել մարդուն և հնարավորություն տալ նրան ընտրելու կրթության սեփական ուղի, օգնել նրան սեփական ճանապարհն անցնելու: Պարտադիր ուսուցումը, ենթատեքստում ունի սովորողի հանդեպ անվստահության մտայնությունը, ինչը, ինչպես արդեն քանիցս կրկնեցինք, մարդուն զրկում է իր ամենացանկալի որակից՝ ինքնուրույնությունից, նաև աշխարհի հանդեպ կենդանի և ակտիվ հետաքրքրությունից:

Դպրոցի և ուսուցչի խնդիրն է օգնել աշակերտին՝ գիտակցել ազատության ու պատասխանատվության դիալեկտիկան: Անառարկելի ճշմարտություն է, որ ազատությունը սովորում են գնահատել ազատ ապրելու պայմաններում, մտածել, պրոբլեմներ հաղթահարել սովորում են դրանք լուծելով, ինքնուրույնության սովորում են նման գործունեություն իրականացնելով, ի վերջո՝ մտածել սովորում են մտածելով, ստեղծագործական գործունեության մեջ ներգրավվելով:

Հետազոտության նպատակն՝ բացահայտել ինքնուրույն աշխատանքների դերը ուսումնական գործընթացում :

Հետազոտության խնդիրներն՝ ուսումնասիրել թեմային առնչվող գիտաուսումնական և գիտամեթոդական գրականությունը,

կիրառել մեթոդներ և առանձնացնել երեխաների ինքնուրույնությանը լավագույնս նպաստող մեթոդները,

անդրադառնալ ինքնուրույն աշխատանքների բովանդակությանը և դրանց ազդեցությանը;

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Անառարկելի է, որ մարդու գործունեության արդյունավետությունը, մտահղացումների, նախաձեռնությունների իրականացման ուղղությամբ ձեռքբերումներն ու հաջողությունները մեծապես պայմանավորված են իր առջև դրված նպատակների ու խնդիրների տեսլականի նկատմամբ ունեցած լավատեսությամբ, վստահությամբ, այսինքն՝ իր ուժերի նկատմամբ հավատով: Սա հնարավոր է առավելապես այն դեպքում, երբ անձը ճանաչում է ինքն իրեն և բարձր է գնահատում իր կարողություններն ու հնարավորությունները: Սա նշանակում է ինքնավստահ լինել սեփական ուժերի նկատմամբ, ունենալ բարձր ինքնագնահատական: Հայտնի է, որ մարդու մտածողության ձևերը (գույներով, ձայներով, պատկերներով, տարածական, միջանձնային և այլն) պայմանավորված են ոչ միայն գենածին ժառանգությամբ, այլև մանկության տարիներին նրա անցած ճանապարհով, ինչպես նաև նրանով, թե մանկության տարիներին ինչով է զբաղվել երեխան, հատկապես մտածողության ո՛ր տեսակներն են «պատվաստել» երեխայի մեջ: Քերոլ Դվեկը կարծում է, որ մանկության տարիներին երեխային «պատվաստած» մտածողության տեսակը վճռորոշ դեր ունի նրա հետագա կարիերայի զարգացման, միջավայրի և ինքն իր հետ խաղաղ հարաբերությունների ձևավորման ու, վերջապես, երջանիկ ապրելու հարցերում[1]: Բացի ընդունված և շատ տարածված մտածողության տեսակներից, որոնց մասին խոսել է Հորվարդ Գարդները[2], Քերոլ Դվեկը դիտարկում է մարդու ինքնագնահատականի ձևավորմանը նպաստող մտածողության երկու տեսակ՝ «սեփական հաջողությունների վրա սևեռված մտածողություն» և «սեփական աճի վրա կենտրոնացած մտածողություն» (фиксированное мышление, мышление роста):

[1]Гарднер Г., Мышление будущего. Пять стратегий, ведущих к успеху в жизни, Альпина–Пиблишл, 2016, 168 с.

[2]Двейк К., Новая психология успеха. Думай и побеждай., 2007, 352с.

ԳԼՈՒԽ 1

ՍԵՓԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՃԱՆԱՉՈՒՄԸ ԵՎ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Թեմայի ուսումնասիրման համար հարկավոր է հաշվի առնել հոգեբանական մեխանիզմները: Քերոլ Դվեկը գտնում է , որ «Սեփական հաջողությունների վրա սևեռված մտածողություն» ունեցող մարդու բնավորությունը, ստեղծագործական ընդունակությունները կայուն են՝ հաստատուն. դրանք նրան տրվել են բնությունից, փոխանցվել են գեներով[1]: Սովորաբար նման մարդկանց մտածողությունը մշտապես սևեռված է իրենց բնածին անձնային որակների վրա, բնությունից ստացած ընդունակությունների, օժտվածության վրա՝ ինքնավստահ, որ իրենք ամեն ինչ կարող են, որովհետև բնությունը իրենց այդպես է արարել: Բնությունից իրենց ստացած արժանիքների վրա սևեռված երեխաները ինքնավստահ են և ունեն բարձր ինքնագնահատական: Այդ զգացողությունն առավել ակնառու է, երբ շրջապատի մարդիկ են սևեռված նրա բնածին ունակությունների վրա, և երեխայի մտածողությունն էլ սևեռում են իր բնածին ձեռքբերումների վրա: «Սեփական աճի վրա կենտրոնացած մտածողություն» ունեցող մարդիկ մշտապես պայքարող են, համառ, աշխատասեր: Նրանք իրենց հաջողություններն ու բոլոր դրական արդյունքները ձեռք են բերում աշխատասիրության շնորհիվ. կենտրոնացած են իրենց ձեռքբերումների ճանապարհի խոչընդոտների հաղթահարման վրա, երբեք չեն վախենում ծագած խնդիրներից, դժվարություններից, չեն ընկրկում և պարտությունը կամ նախաձեռնությունների ձախողումը դիտում են ոչ թե իրենց անհաջողակ կամ անընդունակ լինելու հետևանք, այլ գտնում են, որ անհրաժեշտ է նոր բարձունքներ նվաճել, նոր գիտելիքներ ձեռք բերել և ցատկահարթակ հաղթահարել: Մտածողության այս տեսակի առկայության դեպքում երեխան ի սկզբանե բարձր ինքնագնահատական չի ունենում, այն ձևավորվում է աստիճանաբար, քայլ առ քայլ՝ իր ձեռքբերումներին համընթաց: Այսպիսի ինքնագնահատականը համոզիչ է,

---

[1]Двейк К., Новая психология успеха. Думай и побеждай., 2007, 387с.

կայուն և ձևավորվում է փաստացի գործունեության արդյունքում: Մտածողության այս երկու տեսակների զարգացմանը և ձևավորմանը նպաստում են առաջին հերթին նրա գործունեությանն ու ձեռքբերումներին երեխայի շրջապատի մարդկանց տված գնահատականով, այդ գնահատականի դիտարկման ձևաչափով: Դիտարկենք, թե ինչով են տարբերվում մտածողության այս երկու տեսակների ձևավորմանը նպաստող իրադրությունները:

Իրադրություն 1. Աշակերտը կատարել է իրեն հանձնարարված մի բարդ առաջադրանք: Նա հպարտությամբ հայտարարում է, որ այն ինքը ճիշտ է կատարել և կարճ ժամանակում:

• Ուսուցչի՝ «սեփական հաջողությունների վրա սևեռված մտածողություն» ձևավորմանը նպաստող արձագանքը.

— Օ՜, որքա՜ն խելացի ես դու: Ես վստահ էի, որ դու այդ առաջադրանքը կկատարեիր: Տե՛ս, թե ինչի՛ ես ընդունակ:

• Ուսուցչի՝ «սեփական ճի վրա կենտրոնացած մտածողություն» ձևավորմանը նպաստող արձագանքը. — Ա՜, ես հասկացա, սա քեզ համար դյուրին առաջադրանք էր: Ըստ երևույթին, քեզ պիտի տրվի քիչ ավելի բարդը: Պարզվում է՝ լավ մտածելու դեպքում քեզ մոտ ամեն ինչ ստացվում է, արագ ես յուրացնում նորույթը: Վստահ եմ՝ դժվար առաջադրանքը ևս դու այդպես արագ կկատարես:

Իրադրություն 2. Երեխան ստուգողական աշխատանքից 8 է ստացել: Նա այդ մասին հայտարարում է ծնողներին:

• Ծնողի՝ «սեփական հաջողությունների վրա սևեռված մտածողություն» ձևավորմանը նպաստող արձագանքը.

— Ես համոզված էի, որ դու պիտի 10 ստանայիր: Այդ ի՞նչ էր քեզ համար, որ ընդամենը 8 ես ստացել:

• Ծնողի՝ «սեփական ճի վրա կենտրոնացած մտածողություն» ձևավորմանը նպաստող արձագանքը.

— Վա՛տ չէ, ճշանակում է դու հիմնականում հասկացել ես թեման: Ես վստահ եմ, որ եթե նույնատիպ առաջադրանքը վաղը կատարես, այլևս սխալ թույլ չես տա ու անպայման 10 կստանաս:

Այս պատասխանները մենք ստացել ենք փակ հարցաթերթիկներ տրամադրելով ծնողներին և մեր կոլեգաներին:

Թվում է՝ ուսուցիչ—աշակերտ և ծնող—երեխա հաղորդակցման ձևերի մեջ արձագանքի էական տարբերություն չկա, պարզապես ուսուցիչն ու ծնողները տարբեր կերպ են դրսևորում իրենց վերաբերմունքը: Սակայն այդպես չէ: Առաջին տարբերակում ուսուցիչը և ծնողները գնահատում են ոչ թե իրենց երեխայի ջանքերը, աշխատանքային գործունեության արդյունքում նրա ձեռք բերած հաջողությունները, այլ ընդունակությունները, բնությունից նրան տրված տաղանդը: Այսինքն՝ երեխայի

մտածողությունը սևեռվում է իր տաղանդաշատության վրա: Անշուշտ, այս դեպքում ևս բարձրանում է երեխայի ինքնագնահատականը, սակայն այս դեպքում՝ հիմք ընդունելով՝ «ինձ ամեն ինչ տրված է բնությունից, ուրեմն ես կարող եմ» մտածողության տարբերակը: Երկրորդ դեպքում երեխան խրախուսման խոսքերի արժանացավ ոչ թե տաղանդավոր լինելու, բնությունից «ստացած ժառանգության», այլ սովորել կարողանալու և կամենալու, ավելիին ձգտելու, աշխատասիրության համար՝ դարձյալ իր ուժերի և հնարավորությունների նկատմամբ հավատի և վստահության արժանանալով. այս դեպքում երեխայի 8 ստանալը դիտվեց ոչ թե որպես ձախողում, անհաջողություն, այլ որպես նորմալ իրավիճակ:

Աշակերտի մեջ ձևավորել այն համոզմունքը, որ ինքն ավելի բարձր արդյունքների կհասնի, եթե մի փոքր առավել ջանքեր գործադրի: Այս դեպքում ևս աշակերտի ինքնագնահատականը կբարձրանա. նա ոչ միայն չի հուսահատվի, այլև կոգևորվի՝ վստահ, որ ամեն ինչ պայմանավորված է իր ձգտումներով, թափված ջանքերով, և ինքն ունի համոզմունք. ինքը կարող է դա ապացուցել, որովհետև ունի այդ կարողությունը: Այսպիսով՝ ուսուցչի և ծնողի՝ թե՛ «սևեռված մտածողության», թե՛ «աճի մտածողության» մոտեցման դեպքում էլ, անշուշտ, բարձրանում է երեխայի ինքնագնահատականը: Սակայն առաջին դեպքում այն խարսխվում է բնության կողմից իրեն տրված, ինչ–որ մեկից իրեն փոխանցված ընդունակության վրա, երկրորդ դեպքում՝ իր թափած ջանքերի, աշխատանքի ու եռանդի դրսևորման ճանապարհով ձեռքբերածի վրա: Կարծում ենք, որ աշխատանքի, ճիգերի, ջանքերի գործադրման ճանապարհով երեխայի ձեռք բերած հաջողությունները ոչ միայն բարձրացնում են նրա ինքնագնահատականը, ապահովում նրա մտավոր աճը (որն իմիջիայլոց ինքնագնահատականի հետագա բարձրացման հուսալի խթանիչ է), այլև երեխան բավականություն է ստանում իր անցած ճանապարհից, զգում է սեփական ջանքերով ձեռքբերումների բերկրանքը, և ծնվում է նման ճանապարհներ էլի՛ ու էլի՛ անցնելու պահանջմունք: Աճի մտածողություն ունեցող երեխաները երբեք անհաջողությունից չեն վախենում, նրանց գերխնդիրը ցանկացած պայմաններում սովորելն է: Դոկտոր Դվեկը և նրա ընկերները երեխայի ինքնագնահատման ուղղությամբ կատարած հետազոտության ընթացքում հետևել են չորրորդ դասարանցի 2 խումբ երեխաների, որոնց դաստիարակության գործընթացում ակնհայտորեն նկատելի էր մտածողության՝ վերը նշված երկու տեսակների ազդեցությունը: Ըստ հետազոտողների՝ երկու տարվա ընթացքում իրենց առաջադիմության համար երեխաների ստացած գնահատականների մեջ փոփոխություն չի նկատվել. բոլորն էլ սովորել են նույն մակարդակով, սակայն թե՛ ուսուցիչները, թե՛ դասընկերները փաստում էին, որ իրենց գործունեության և միջանձնային հարաբերությունների մեջ երկու խմբերի երեխաները բացարձակ տարբեր նպատակներ էին հետապնդում: «Սևեռված մտածողություն» ունեցող երեխաները ձգտում էին ցանկացած գնով շրջապատի վրա թողնել խելացի, տաղանդավոր, բացառիկ աշակերտների տպավորություն, իսկ նրանց վարքը,

միջանձնային հարաբերությունների բնույթն առավելապես տանում էին շրջապատից, մանկական հասարակությունից օտարացման, հեռացման[1]:

Փաստորեն իրենց տաղանդների, բացառիկության վրա խարսխված բարձր ինքնագնահատականը ոչ միայն չէր օգնում նրանց սոցիալականացմանը, միջանձնային առողջ հարաբերությունների ձևավորմանը, այլև խոչընդոտում էր նրանց աճին, զարգացմանը. ուսուցիչները նկատում էին, որ նշված երեխաների՝

[1] www.vospitay.com

ավելիին ձգտելու միտումը նվազում էր: Ակնհայտորեն պարզ է, թե մտածողության ո՛ր տեսակով «պատվաստված» անձի համար է ավելի դյուրին հաղթահարել կյանքի փորձությունները, զարգանալ, հասարակության ու իր հետ ապրել խաղաղ համագործակցության պայմաններում:

ԳԼՈՒԽ 2

ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ԻՆՔՆՈՒՐՈՒՑՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Մեր կրթական համակարգում երկար տարիներ գործառել է կրթության հանդեպ այսպես կոչված, գիտելիքային-տեղեկատվական մոտեցումը, երբ կրթության բովանդակությունը դիտվում է որպես գիտելիքների կարողությունների և հմտությունների ամբողջություն: Այսօրինակ մոտեցումը գիտելիքների յուրացման բավարար մակարդակ ապահովելով հանդերձ, չի ապահովում ժամանակակից մարդու համար շատ կարևոր մի շարք մտավոր և անձնային որակների ձևավորումը: Սովորողի քննադատական մտածողության, ստեղծագործական կարողությունների բացահայտման ու զարգացման, իրականության հանդեպ ակտիվ վերաբերմունքի և մարդուն անհրաժեշտ կոնկրետ կարողությունների ձևավորման խնդիրները ավանդական կրթությունը անուշադրության է մատնում:

Ժամանակակից մանկավարժությունը հակված է կրթության բովանդակությունը մեկնաբանելու որպես մանկավարժականացված սոցիալական փորձ, կամ սոցիալական փորձի մանկավարժական մոդել: Սա նշանակում է, որ կրթության բովանդակության մեջ պետք է արտացոլվի տվյալ հասարակության կուտակած մշակութային արժեքները, այնպես որ սովորողները ձեռք բերեն ոչ թե վերացական, կյանքից կտրված ինչ-որ գիտելիքներ ու կարողություններ, այլ կարողանան ներքնայնացնել առկա մշակութային արժեքներն ու ապրել դրանցով: Այսպիսով, մանկավարժական նոր մոտեցումները պահանջում են մի կողմից ձևավորել մարդուն անհրաժեշտ գիտելիքներ ու կարողություններ, մյուս կողմից մարդուն հասարակության լիարժեք անդամ դարձնելու համար զարգացնել այնպիսի որակներ, ինչպիսիք են քննադատական մտածողությունը, համագործակցային կարողությունները, ինքնուրույնությունը, հավակնությունների մակարդակը, ոչ ստանդարտ իրավիճակներում կողմնորոշվելու ու վճիռներ կայացնելու հմտությունները:

Այս խնդիրների լուծման մի միջոց են ինտերակտիվ ուսուցման մեթոդները:

Ինտերակտիվ ուսուցումը ենթադրում է սովորողի ուսուցման պրոցեսին ակտիվ մասնակցությունը: Ուսուցումը պասիվ է, երբ ուսուցիչ աշակերտ հարաբերություններում ակտիվություն դրսևորում է միայն ուսուցիչը, իսկ աշակերտները պասիվ լսողի, կամ հանձնարարություններ կատարողի դերում են: Ուսուցումը դառնում է ակտիվ, երբ աշակերտները դառնում են դասապրոցեսի մասնակից, սակայն փոխազդում են միայն ուսուցչի հետ: Ուսուցումն ինտերակտիվ է, երբ աշակերտները փոխազդեցության մեջ են մտնում ինչպես ուսուցչի այնպես էլ միմյանց հետ:

Ինտերակտիվ ուսուցման հիմքը երկխոսությունն է, այն իր բնույթով համագործակցային ուսուցում է և ապահովում է բոլոր աշակերտների ներգրավվածությունը ուսուցման պրոցեսում:

Ինտերակտիվ ուսուցման համար հատկանշական են հետևյալ բնութագրիչները

- կրթության սուբյեկտների՝ ուսուցչի և աշակերտների մշտական փոխազդեցությունը, փոխուսուցումը,
- սովորողների ակտիվությունը,
- համագործակցությունը,
- ինքնաարտահայտման խրախուսումը,
- հետադարձ կապն ու անդրադարձ վերլուծությունը:

Ուսուցման արդյունավետությունը զգալիորեն բարձրանում է, երբ աշակերտները աշխատում են բաժանվելով փոքր խմբերի (3-5 հոգի): Այն էապես մեծացնում է սովորողի ակտիվությունը: աշակերտները համատեղ լուծում են միևնույն խնդիրը, ինքնուրույն կարող են խնդիրը մասնատել առանձին տարրերի, դերերի բաշխում կատարել, քննարկել միմյանց հետ անհասկանալի հարցերը, սովորել միմյանցից ու սովորեցնել միմյանց:

Փոքր խմբերով աշխատանքի առավելություններից մեկն էլ այն է, որ յուրաքանչյուր սովորող աշխատելով մյուսների հետ գիտակցում է, որ պատասխանատվություն է կրում խմբի հաջողության համար: Թիմի անհաջողությունը նաև իր անհաջողությունն է, իսկ ընդհանուր հաջողության համար կարևոր է իր ներդրումը: Այս տեսանկյունից համագործակցային ուսուցումը դաստիարակչական մեծ ներուժ ունի:

Այսօրինակ ուսուցման պարագայում ուսուցչի դերը փոխվում է. նա ոչ միայն դասավանդող է, այլ նաև և գլխավորապես, ուսուցման պրոցեսը կազմակերպող, խմբերի աշխատանքին աջակցող, նրանց գործունեությունը գնահատող, սովորողների իմացական հնարավորությունները, մտածելակերպը, արժեքային կողմնորոշումները բացահայտող, ծագած կոնֆլիկտները լուծող անձ:

Ուսուցման մեթոդները նպատակ ունեն ապահովել կրթության բովանդակության որակյալ յուրացումը: Կրթության բովանդակությունը գիտելիքների, կարողությունների և արժեքների միասնությունն է:

Կարողությունը գիտելիքների և ընդունակությունների կիրառումն է պրակտիկայում: Դա գործունեության մի տարր է, որն ապահովում է ինչ-որ բանի ճիշտ և որակյալ կատարումը:

Կարողության լրիվ ավտոմատացված, անգիտակցական վերահսկողության մակարդակով կատարվող բաղադրիչները կոչվում են հմտություններ: Հմտությունները ձևավորվում են վարժությունների միջոցով: Հմտությունների առկայության դեպքում մարդու գործողությունների կատարման արագությունը կտրուկ մեծանում է:

Կարողություններն, ի տարբերություն հմտությունների, միշտ կախված են և հենվում են մարդու ակտիվ ինտելեկտուալ գործունեության վրա և պարտադրաբար իրենց մեջ ներառում են մտածողության գործընթացներ: Գիտակցական հսկողությունը այն գլխավոր հատկանիշն է, որը տարբերում է կարողությունը հմտությունից:

Մեթոդը, բառացի նշանակում է «որևէ բանի հասցնող ուղի, լայն իմաստով՝ նպատակին հասնելու եղանակ, որոշակի ձևով կարգավորված գործունեություն:

Մեթոդը իրականության ճանաչման անհրաժեշտ միջոց և գործիք է, այն որոշակի սկզբունքներով, կանոններով ու հնարներով իրականացվող գործունեություն է, որ կոչված է ապահովելու տրված նպատակը տանող կարճագույն ուղի:

Մեթոդները ստեղծվում են այս կամ այն տեսության շրջանակներում և կոչված են ծառայելու վերջինիս: Յուրաքանչյուր տեսություն ստեղծում է իր մեթոդները և նրանց օգնությամբ լուծում տարազան հետազոտական կամ պրակտիկ խնդիրներ: Ուրեմն, մեթոդները գործիքներ են, որոնց օգնությամբ տեսությունն իրականացնում է իր իմացական կամ գործնական նպատակները: Այլ խոսքով, մեթոդը տեսության գործունակության, նրա ակտիվության դրսևորման միջոց է: Առանց մեթոդի տեսություն չկա, կարելի է ասել, որ մեթոդը միշտ թաքնված ձևով առկա է տեսության մեջ. դա գործունեության այն եղանակն է, որը ածանցվում կամ արտածվում է տեսության հիմնարար սկզբունքներից ու օրենքներից:

Կարևոր է ընդգծել նաև մեթոդի ու տեսության տարբերիչ առանձնահատկությունները: Տեսությունները երկու հիմնարար գործառույթ ունեն. բացատրել առկա փաստերը և կանխատեսել նոր փաստեր: Մեթոդը նման գործառույթներ չունի, այն ընդամենը տեսության կամ պրակտիկ գործունեության կարգավորիչ է, իրականության ճանաչման կամ նրա վերափոխման ռազմավարություն:

Ուսուցման մեթոդը ուսուցչի, աշակերտի իմացական և պրակտիկ գործունեությունը կազմակերպող, հաջորդական գործողությունների համակարգ է, որը հանգեցնում է կրթության բովանդակության յուրացմանը, ասել է թե՝ ուսուցման նպատակների իրականացմանը:

Ուսուցման մեթոդն իր գործառության մեջ ենթադրում է որոշակի ուսումնական նպատակի և վերջինս իրականացնելու համար անհրաժեշտ գործողությունների ու համապատասխան միջոցների առկայություն : Այլ խոսքով

Ուսուցման մեթոդը, ուսուցման նպատակների իրականացմանն ուղղված մանկավարժի և սովորողների փոխկապակցված ու փոխպայմանավորված գործունեության եղանակ է կամ այլ կերպ՝ ուսումնական խնդիրների լուծմանը միտված, սովորողների իմացական և պրակտիկ գործունեությունը կազմակերպող մանկավարժի նպատակաուղղված գործողությունների համակարգ:

Մանկավարժները միահամուռ այն կարծիքին են, որ մեթոդն է ուսուցման նպատակներն իրականացնողը և «ինչպե՞ս սովորեցնել հարցին միայն վերջինս է պատասխանում: Ենթադրվում է, որ ուսուցման կազմակերպական ձևը երկրորդական նշանակության կառուցվածք է և կրթության որակի ապահովման խնդրում նկատելի դեր չունի: Ուսուցման մեթոդը մատնանշում է ուսուցման ներքին, պրոցեսուալ կողմը և հանդես է գալիս մի կողմից որպես ուսուցչի ուսուցանող աշխատանքի, մյուս կողմից՝ ուսումնական նյութի յուրացմանն ուղղված սովորողների ուսումնական (իմացական) գործունեության եղանակ: Ուսումնական աշխատանքի կազմակերպման ձևի հասկացությունը այլ իմաստ ունի: Լատինական forma բառը նշանակում է արտաքին տեսք, արտաքին ուրվագիծ: Հետևաբար, ուսուցման ձևը որպես դիդակտիկական կատեգորիա, մատնանշում է ուսումնական աշխատանքի կազմակերպման արտաքին կողմը, որը կապված է սովորողների քանակի, ուսուցման ժամանակի ու տեղի, ինչպես նաև նրա իրականացման կարգի հետ :

Եվ այսպես, դասը և ուսուցման կազմակերպական բոլոր ձևերը ուսուցման ամբողջական գործընթացում երկրորդական նշանակություն ունեն, վերաբերում են ուսուցման արտաքին կողմին, չեն առնչվում նրա ներքին էությանը: Այս համարյա համընդհանուր ճանաչում գտած տեսակետը հիմնված է մի մոտեցման վրա, ըստ որի՝ ուսուցումն իր էությամբ իմացական գործունեություն է: Մեթոդն է, որ կազմակերպում, կարգավորում է այդ գործունեությունը: Նրա կիրառումը ուղղակի, կոշտ կախում չունի աշակերտների թվից, դասագրքերի առկայությունից կամ նրանց որակից, ուսումնական միջավայրի առանձնահատկություններից՝ այն ամենից, ինչից ուղղակիորեն կախյալ է ուսուցման կազմակերպական ձևը: Մեթոդը հաշվի է առնում մարդու հոգեկան կառուցվածքը, հոգեկանում ընթացող իմացական պրոցեսների առանձնահատկությունները, ճանաչողության հոգեբանական մեխանիզմները: Մեթոդն ստեղծվում է այս ամենի գիտական իմացության հենքի վրա: Ուսուցման կազմակերպական ձևը, ենթադրվում է, որ այս ամենի հետ առնչություն չունի, կամ առնվազն, որոշիչ չէ այդ առնչությունը: Այն հիմնականում կոնկրետ իրադրական խնդիրներ լուծելու գործառույթ ունի. ինչպես միավորել սովորողներին մեկ ընդհանուր ուսումնական գործընթացի մեջ, ինչպես կազմակերպել նրանց և ուսուցչի միջև փոխհարաբերությունները, տվյալ պայմաններում ուսուցման այս կամ այն մեթոդը լավագույնս իրականացնելու համար և այլն:

Ժամանակակից աշակերտին անհրաժեշտ են ոչ միայն տեսական գիտելիքներ տարբեր առարկաներից, այլ նաև այդ գիտելիքները աշխատանքային և հոգևոր գործունեության տարբեր ոլորտներում կիրառելու պրակտիկ կարողություններ ու հմտություններ, այստեղ էլ կդրսևորվի նրա ինքնուրույնությունը: Ներկայացնենք մեր կիրառած աշխատանքները՝ համագործակցելով կոլեգաների հետ:

Վարժություններ

Վարժությունների մեթոդի դեպքում սովորողները բազմիցս կատարում են միևնույն գործողությունները, այսինքն վարժվում են յուրացված տեսական նյութը պրակտիկայում կիրառելու մեջ, դրանով իսկ խորացնելով իրենց գիտելիքները, ձեռք բերելով համապատասխան կարողություններ ու հմտություններ, ինչպես նաև զարգացնելով իրենց մտածողությունն ու ստեղծագործական ընդունակությունները:

Կարող են լինել բանավոր կամ գրավոր վարժություններ, պրակտիկ առաջադրանքներ բնագիտական առարկաներից, ստեղծագործական աշխատանքներ լեզվից ու գրականությունից և այլն:

Գործնական աշխատանքներ

Գործնական աշխատանքների մեթոդի հիմնական ֆունկցիան ձեռք բերած գիտելիքների կիրառումն է գործնական խնդիրների լուծման ընթացքում: Այն նաև լուծում է սովորողների գիտելիքների խորացման ու ամրապնդման խնդիրը:

Աշակերտների կողմից գործնական աշխատանքների անմիջական կատարմանը նախորդում է ուսուցչի բացատրությունը, որը նպատակ ունի տեսականորեն իմաստավորել աշխատանքը և գործողությունների շարքի ցուցադրումը: Դրանից հետո աշակերտները կատարում են աշխատանքը, իսկ ուսուցիչը վերահսկում է նրանց գործողությունները:

Լաբորատոր աշխատանքներ

Լաբորատոր աշխատանքների մեթոդի հիմնական ֆունկցիան սովորողների մեջ գիտափորձարարական հետազոտական աշխատանքի տարրական կարողություններ ձևավորելն է:

Լաբորատոր աշխատանքները սովորեցնում են աշխատել տարատեսակ սարքերի և նյութերի հետ, ձևավորում են չափումներ, հաշվարկներ կատարելու, փորձի արդյունքները ամփոփելու, վերլուծելու և եզրակացություններ անելու կարողություններ:

Ճանաչողական խաղեր

Որպես ուսուցման մեթոդ խաղը իրականության մոդելավորման մի ձև է, հատուկ կազմակերպված իրադրություն, որից սովորողներին առաջարկվում է ելք գտնել:

Խաղի մեթոդի հիմնական ֆունկցիան սովորողի ճանաչողական գործունեությունը իրականությանը մոտեցնելն է : Այս խաղերը լայնորեն կիրառվում են հատկապես օտար լեզուների և գրականության դասավանդման, ինչպես նաև համակարգչային ուսուցման պրոցեսում:

ԳԼՈՒԽ 2.1

ԻՆՔՆՈՒՐՈՒՑՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Աշխատանքի գնահատումը ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է: Այն օգնում է պարզել յուրաքանչյուր սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակը, ինչպես նաև ստանալ դպրոցի կողմից առարկայական ու դպրոցական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ամբողջական պատկերը: «Գնահատում» բառը կրթական համատեքստում կիրառության մեջ մտել է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Կրթական գնահատումը լայն հասկացություն է, որը նկարագրում է ցանկացած գործունեություն, որը կարող է տեղի ունենալ սովորողի կամ սովորողների գիտելիքների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով: Նոր մոտեցումներով գնահատումը, ոչ միայն սովորողի առաջադիմության փաստագրումն է, այլև ուսուցման ընթացքի խթանման կարգավորման, վերհսկման և բարելավման մեխանիզմ:

Ինքնուրույն աշխատանքի գնահատման հիմնական գործառույթներն են՝

1. սովորողի հիմնական գործունեության և առաջադիմության գնահատումը, կրթական մի աստիճանից մյուսին անցնման հնարավորության ապահովումը, կրթության շարունակականության խրախուսումը,
2. սովորողին ներկայացվող պահանջների կատարման, ուսումնական նյութի յուրացման աստիճանի բացահայտումը,
3. դպրոցի գործունեության արդյունավետության բացահայտումը, ուսուցիչ–սովորող համագործակցային հարաբերությունների զարգացումը,
4. սովորողի հետ տարվող անհատական աշխատանքի բովանդակության և ծավալի ճշգրտումը,
5. սովորողի անձնային որակների ձևավորման և վարքագծի բացահայտմանը նպաստելը, ինքնահանաչողության ապահովումը,
6. մանկավարժների վերապատրաստման և մասնագիտական աճի ապահովումը,

7. չափորոշիչների, առարկայական ծրագրերի, դասագրքերի և ուսումնական այլ նյութերի, ուսուցման մեթոդների կատարելագործման հիմքերի ապահովումը,
8. հանրակրթության բարեփոխման ուղղությունների հստակեցումը, բովանդակության արդիականացումն ու կրթական համակարգի համապատասխանեցումը միջազգայնորեն ընդունված չափանիշներին,
9. սովորողի ուսումնական գործունեության արդյունքների որակավորումը,
10. դպրոցի հանդեպ ծնողների վստահության ձևավորումն ու ամրապնդումը:

Գնահատման հիմնական սկզբունքները հետևյալն են՝

- օբյեկտիվություն
- արդարություն
- հուսալիություն
- անկողմնակալություն
- հավաստիություն
- հիմնավորվածություն
- մատչելիություն
- թափանցիկություն[1]

Տարրական դասարաններում ինքնուրույն աշխատանքը բավականին մեծ դեր , նշանակություն ունի:

Տարրական դասարանում ինքնուրույն աշխատանքի անցկացումն ունի որոշակի առանձնահատկություններ: Տարրական դասարաններում դասերի ընթացքում գերակշռում է ուսուցման ճակատային՝ ֆրոնտալ ձևը, երբ աշակերտների գործողությունները հիմնականում կախված են ուսուցչի անմիջական հրահանգներից:

Սակայն մեր հետազոտությունը ցույց է տալիս, որ տարրական դասարաններում հարկավոր է հնարավորինս ազատել սովորողներին մեր՝ ուսուցիչներիս ,ազդեցությունից և թույլ տալ նրանց ինքնուրույն գործել և մտածել: Կարևոր է խրախուսել և ցույց տալ աշակերտին, որ նա մենակ չէ այդ խնդրի առջև . նրա հետ են իր ընկերները , ովքեր կարող են օգնության ձեռք մեկնել, սակայն նա միշտ պետք է իմանա, որ կարող է կատարել այդ առաջադրանքը, իսկ հոգեբանորեն նրան պատրաստելն այն բանին, որ միգուցե սեփական ուժերից վեր լինի առաջադրանքի կատարումը, ուսուցչի ուսերին է:

[1] Հանրակրթության պետական կրթակարգ. Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ, Երևան, «Անտարես», 2004.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՑՈՒՆՆԵՐ

- Ինքնուրույնության ձևավորման նախապայմանը ազատությունն է: Որպեսզի սովորողը ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալի, նրան անհրաժեշտ է այդ հնարավորությունը տալ:
- Ինքնուրույնությունը կարող է ձևավորվել միմիայն համապատասխան գործունեության պրոցեսում:
- Եթե երեխային սովորեցնում ենք պարտադրաբար, եթե նրան ուսումնական գործունեության ազատություն, սխալվելու և սեփական սխալների հիման վրա ճշմարիտ ճանապարհ դուրս գալու իրավունք չենք տալիս, երբեք նրանից ինքնուրույն մարդ չի ձևավորվի:
- Սովորողի հնարավորինս ազատ ուսումնական գործունեություն ծավալելու իրավունքի ոտնահարումը շատ հոգեբանական վնասների պատճառ է դառնում:
- Ուսուցման տեխնոլոգիան կամ կիրառվող մեթոդները լավագույնն են, եթե լավագույնս նպաստում են մարդու ինքնուրույնության ձևավորմանը, հիմնարար գիտելիքների ձեռքբերմանն ու ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Հանրակրթության պետական կրթակարգ. Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ, Երևան, «Անտարես», 2004.

Гарднер Г., Мышление будущего. Пять стратегий, ведущих к успеху в жизни, Альпина–Пиблишл, 2016,

Двейк К., Новая психология успеха. Думай и побеждай., 2007,

www.vospitay.com